ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԼՂՀ զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչություն

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՆՔԵՐԸ «ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ԿՈՉԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի միջնադարյան վանքերի շինարարությունը լայն թափ է ստանում հատկապես Ժ.-ԺԴ. դարերում: Բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր են կառուցվում կամ վերականգնվում իշխանական տարբեր տների նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ, որոնցից կարեւորները դառնում են նրանց տերության հոգեւոր կենտրոններ: Մաղաքիա արք. Օրմանյանի խոսքերով՝ Ժ.-ԺԱ. դդ. «իշխաններուն մէջ մրցակցութիւն մը կար եկեղեցիներ եւ վանքեր կառուցանելու եւ շէնացնելու, եւ անոնք կալուածներով ճոխացնելու...»[1]: Բազմաթիվ վանքեր, ժամանակի ընթացքում համալրվելով աշխարհիկ ու հոգեւոր նոր շինություններով, ամբողջանում են՝ դառնալով բարդ եւ ներդաշնակ համալիրներ[2]: Միաժամանակ այդ վանքերը գիտության եւ մշակույթի օջախներ էին, ուր կենտրոնացած էր ժամանակի գիտական միտքն ու մշակութային եռանդը: Որոշ վանքեր հայտնի էին հռչակ վայելող վարդապետներով, ինչն ավելի էր կարեւորում տվյալ հոգեւոր հաստատության դերը: Դրանցից մի քանիսը մեծ դերակատարում ունեին եկեղեցական եւ պետական կարեւոր որոշումներ կայացնելու գործում:

Այս շարակարգում ուշագրավ է, որ ինչպես միջնադարյան, այնպես եւ ԺԹ.-Ի. դարերի հեղինակների երկերում նշանավոր վանքերի վերա-

---

[1] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., Պէյրութ, 1959, էջ 524:

[2] **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 295:

բերյալ երբեմն օգտագործվում է «մայրաքաղաք» եզրույթը: Առաջին նման հիշատակումը հանդիպում է Մովսես Կաղանկատվացու երկում, ուր ներկայացնելով Սուրբ Եղիշայի (Եղիշեի) քարոզչական գործունեությունը, նշում է, որ գալով Գիս՝ վերջինս կառուցեց եկեղեցի. սա եղավ արեւելցիների (Հայոց Արեւելից կողմանց՝ Արցախ եւ Ուտիք աշխարհները - Տ. Ա.) եկեղեցաշինության սկիզբը՝ դառնալով «մայրաքաղաք». «Սուրբ հայրապետն եկեալ ի Գիս՝ կանգնեաց եկեղեցի եւ մատոյց զանարիւն պատարագ: Յայսմ տեղւոջ եղեւ սկիզբն արեւելեայցս եկեղեցեացս մայրաքաղաքաց եւ լուսաւորութեան տեղի»[3]:

Մեկ այլ առիթով՝ Թ. դարի դեպքերը նկարագրելիս, Աղվանից երկրի պատմագիրը Մաքենյաց վանքը հիշատակում է «մաքենացիների մեծ մայրաքաղաք» անվամբ. «Եւ անտի ի միւս տարին էանց Բաբան ի գաւառն Գեղարքունի եւ էարկ ի սուր զբնակիչսն ոգիս իբրեւ ԺԵ. հազարս եւ զմեծ մայրաքաղաքն Մաքենացւոց այրեաց, մնաց միայն ջրաղացն եւ այլ ոչ ինչ. եւ էր թիւն Հայոց ՄՀԶ.»[4]:

Վանքը մայրաքաղաք հիշատակելու այլ դեպք հայտնի է ԺԲ. դարի իրադարձությունների շարակարգում: 1179 թ. հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլա քաղաքում գումարվեց եկեղեցական ժողով՝ նվիրված Բյուզանդական Եկեղեցու գերիշխանությունն ընդունելու հարցին, որին հրավիրված էին նաեւ հյուսիսարեւելյան Հայաստանի հոգեւոր առաջնորդներն ու նշանավոր վարդապետները: Վերջիններս, Կիլիկիա գնալու փոխարեն, ուղարկեցին իրենց համախոսական թուղթը՝ միության մերժումով, որում կա հետաքրքիր հիշատակում. «...ամենանուաստ աղօթող աշակերտքս լուսաւորչական աթոռոյդ Բասիլ եպիսկոպոս, որ յարեւելս հիւսիսոյ. վարդապետ Գրիգոր Սանահնին, եւ հայր Յովհաննէս. վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան եւ Դաւիթ. Խաչատուր վարդապետ Հաղարծնին, Մխիթար վարդապետ Խոռակերտոյ. Եւ միւս Մխիթար վարդապետ Գետկայ եւ այլք...»[5]:

Արցախի վանքերի ուսումնասիրությանն անդրադարձած Հ. Ոսկյանը, Մեծառանից գավառի Ս. Հակոբավանքում ԺԴ. դարում կազմված Ավետարանի մասին խոսելիս, նշում է. «1383 թ. Աւետարան մը կը կազմուի Մեծ կողմանց Խաչենոյ եպիսկոպոսարանէս մայրաքաղաքէնս...»[6]:

---

[3] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագ. եւ ներած.՝ Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ 10:

[4] Անդ, էջ 326-327:

[5] **Ներսէս Շնորհալի**, Թուղթ Ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 426-427:

[6] **Հ. Ոսկյան**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 90:

Հավելենք, որ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում կա նաեւ «Մայրաքաղաք» անվամբ վանք: Դրանից այսօր տեսանելի են գլխավոր եկեղեցին եւ գավթի որոշ հատվածներ, որի մի մասն ավելի ուշ անջատվել եւ վերածվել է գրատան: Հետաքրքիր է, որ վանքի ավերակները նկարագրելիս «մայրաքաղաք» անվանումն են գործածել նաեւ ԺԹ. դարի հետազոտողներ Սարգիս Ջալալյանցը, Մակար Բարխուտարյանցը եւ Հայկունին[7]. ենթադրելի է, որ վանքն այդպես կոչելը տարածված է եղել ոչ միայն ԺԹ. դարավերջում, այլ ունի ավելի վաղ արմատներ: Ս. Ջալայանցն ու Մ. Բարխուտարյանցը այն անվանում են նաեւ «եպիսկոպոսանոց»[8]:

Վանքերը «մայրաքաղաք» կոչելու երեւույթն առավել ընկալելի դարձնելու տեսանկյունից դիպուկ բնութագրումներ են պահպանվել Ստեփանոս Օրբելյանի աշխատության մեջ: Իր հայտնի երկը շարադրելիս Սյունյաց տան պատմիչը բազմիցս անդրադարձել է Տաթեւի վանքին՝ այն կոչելով «Տաթեւի մեծ կենտրոն», «Տաթեւի սուրբ մայր վանք», «Մեծ հայրապետանոց», «Տաթեւի եպիսկոպոսարան», «Սուրբ Տաթեւ մայրաքաղաք»[9]:

Կարեւոր է նաեւ հատուկ ուշադրություն դարձնել պատմական այն ժամանակահատվածին, երբ առանձին վանքեր հիշատակվում են իբրեւ մայրաքաղաք: Պատմական անցքերի քննությունը ցույց է տալիս, որ այդ երեւույթը տարածում էր գտնում հատկապես խառնակ ժամանակներում, երբ առաջ են գալիս հակաթոռ կաթողիկոսություններ, անընդհատ տեղափոխվում է հայրապետական նստավայրը, ծավալվում են աղանդավորական շարժումներն ու քաղկեդոնիկ Եկեղեցու ձուլողական քաղաքականությունը: Պատմական նման շրջափուլերում էր, որ ժամանակի առաջադեմ մտածողներով հայտնի առանձին վանքեր ստանձնում էին երկրի տարբեր հատվածների հոգեւոր կառավարման գործը՝ դառնալով յուրօրինակ «մայրաքաղաքներ»:

Բագրատունյաց թագավորության կործանումից հետո՝ հայոց քաղաքական կենտրոնը Կիլիկիա փոխադրելու հետ մեկտեղ տեղափոխվեց նաեւ կաթողիկոսական աթոռը: Դրանով հանդերձ, սակայն, բուն Հայաստանում հոգեւոր կյանքը չմարեց: Կենտրոնանալով տարբեր վանքե-

---

[7] **Ս. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ., Տփղիս, 1858, էջ 231-233. **Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 191. **Եղիշե ավ. քհն. Գեղամյանց (Հայկունի)**, Ուղեգնացական ակնարկներ, Երեւան, 2010, էջ 69:

[8] **Ս. Ջալալեանց**, նշվ. աշխ., էջ 231. **Մ. Բարխուտարեանց**, Արցախ, Ծանօթութիւններ, էջ 426:

[9] **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 69, 168, 183:

րում՝ Հայաստանի հոգեւորականները ձեւավորում են, այսպես կոչված, «Արեւելյան վարդապետներ»-ի խումբը[10]*: Հայ Եկեղեցու պատմահայր Մաղաքիա արք. Օրմանյանը, ԺԱ.-ԺԲ. դարերի պատմական անցքերը շարադրելիս, բազմիցս կիրառում է «արեւելցիներ»*[11] *բառը, որը Կիլիկիայից արեւելք գտնվող՝ բուն Հայաստանի տարածքում առկա նշանավոր վանքերում գործող բարձրաստիճան վանականների հավաքական անվանումն էր: Մաղաքիա արք. Օրմանյանի նկարագրությունները Սանահինի եւ Հաղպատի վանքերի վերաբերյալ արտացոլում են խնդրո առարկա երեւույթն ու ամբողջացնում դրանց մասին եղած դատողությունները: Ժ.-ԺԱ. դարերում կառուցված վանքերը թվելիս՝ գիտնականը նշում է. «Բայց աւելի նշանաւոր են Ջորոյգետ գաւառին մէջ շինուած զոյգ վանքերը, Սանահնի Ս. Ամենափրկիչը եւ Հաղբատու Ս. Նշանը, որոնք շատ խօսուած են հետագայ դարերու մէջ ալ՝ իբրեւ Արեւելեան վարդապետներու խումբին կեդրոն»*[12]*: Հեղինակը մեկ այլ առիթով նշում է. «...Հաղբատ ալ Սանահինի հետ Արեւելեան վարդապետներուն օրրանը դարձած էր, եւ հիւսիսային գաւառներուն մէջ գտնուող հայերուն կեդրոնն էր...»*[13]*:*

Այսպիսով՝ վերը շարադրված դիտարկումները հնարավորություն են տալիս ամրագրելու, որ միջնադարյան վանքերի հիշատակման ժամանակ «մայրաքաղաք» եզրույթն օգտագործելը բնորոշ է եղել հոգեւոր-քաղաքական գործընթացներում կարեւոր դեր ունեցող վանքերի պարագայում: Այսինքն՝ վանքերը «մայրաքաղաք» անվանելով՝ նպատակ է դրվել դրանք ներկայացնել իբրեւ Աստծո շեն ու նորոգ, բազմամարդ կենտրոն, եկեղեցական կարեւոր հաստատություն:

РЕЗЮМЕ

Строительство армянских монастырей имело большой размах особенно в 11-14-ых веках. Со временем многие монастыри дополнились новыми светскими и религиозными зданиями и стали большими духовными комплексами. В то же время эти монастыри были центрами науки и культуры, где была сосредоточена научная мысль и культурная жизнь. При упоминании некоторых монастырей средневековые письменные источники используют понятие майракахак (столица). В статье делается попытка интерпретации этого термина в связи с конкретными монастырскими комплекасми.

[10] **Մ. արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 571, 703, 723:
[11] Անդ, էջ 757-758:
[12] Անդ, էջ 571:
[13] Անդ, էջ 703:

SUMMARY

Construction of the Armenian monasteries took large scales especially during the 11-14th centuries. Over time many monasteries were replenished with new secular and religious buildings becoming complete and harmonious complexes. At the same time the monasteries were centers of science and culture, where the scientific thought and cultural vigor of the time was concentrated. For some of the monasteries medieval sources use also the term *mayraqakhaq* (capital). This report attempts at interpreting this term in their relation to certain monastic complexes.